ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ I ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀԵՏՈ (1919—1920)

ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծումը (1919) խոշոր երևույթ էր միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման պատմության մեջ։ Հանրագումարի բերելով Կոմինտերնի I կոնգրեսի արդյունքները, Վ. Ի. Լենինը գրել է. «Հեղափոխության մեջ հաստատուն է միմիայն այն, ինչ որ նվաճված է պրոլետարիատի մասսաների կողմից։ Գրանցել արժե միմիայն այն, ինչ որ իսկապես հաստատուն կերպով նվաճված է։

III, Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը Մոսկվայում 1919 թվականի մարտի 2-ին այն բանի ղրանցումն էր, ինչ նվաճել են ո՛չ միայն ռուսական, ո՛չ միայն ռուսաստանյան, այլև գերմանական, ավստրիական, հունգարական, ֆինլանդական, շվեյցարական,— մի խոսքով՝ միջազգային պրոլետարական մասսաները։

Եվ հենց դրա համար էլ III, Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը մի հաստատուն գործ է»[1]։

Կոմինտերնի I կոնգրեսից հետո համաշխարհային կոմունիստական շարժման զարգացումը հաստատեց Վ. Ի. Լենինի այն կանխատեսումը, որ նրա ստեղծումը կարագացնի ձախ սոցիալիստների՝ օպորտունիզմից կապերը խզելու պրոցեսը և կնպաստի մի շարք երկրներում կոմունիստական կուսակցությունների առաջացմանը։ Իսկապես, ընդամենը մեկ տարվա ընթացքում «Կոմունիստական Ինտերնացիոնալը այնպիսի հաղթանակներ ձեռք բերեց, որպիսիք չէր կարելի սպասել և կարելի է համարձակորեն ասել, որ նրա հիմնադրման ժամանակ ոչ ոք այդպիսի վիթխարի հաջողությունների չէր սպասում»[2]։ Կոմինտերնի I կոնգրեսից հետո, մինչև 1920 թ. աշունը, կոմունիստական կուսակցություններ ստեղծվեցին Հարավսլավիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում, Մեքսիկայում, Դանիայում, Իսպանիայում, Ինդոնեզիայում, Իրանում, Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում, Թուրքիայում։ Կոմինտերնի պլատֆորմին միանալու հայտարարությամբ հանդես եկան նաև մի շարք սոցիալիստական կուսակցություններ։ «Աշխարհում չկա ոչ մի երկիր, նույնիսկ ամենաանզարգացած, որտեղ մտածող բոլոր բանվորները չմիանան Կոմունիստական Ինտերնացիոնալին, գաղափարապես չհարեն նրան։ Սրա մեջ է լիակատար երաշխիքը այն բանի, որ Կոմունիստական Ինտերնացիոնալի հաղթությունը ամբողջ աշխարհում ոչ չափազանց հեռավոր ժամանակամիջոցում ապահովված է»,—նշում էր Վ. Ի. Լենինը[3]։ Կոմինտերնին միանալու հայտարարությամբ հանդես եկան Արգենտինայի ինտերնացիոնալ-սոցիալիստական, Հունաստանի

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 621։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 532։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 543։

սոցիալիստական-բանվորական, Ռումինիայի սոցիալիստական, Շվեդիայի ձախ սոցիալ-դեմոկրատական, նորվեգական բանվորական, իտալական սոցիալիստական, բրիտանական սոցիալիստական, Լյուքսեմբուրգի սոցիալիստական կուսակցությունները և անգլիական բանվորական կուսակցության շոտլանդական ֆրակցիան, մի շարք հեղափոխական խմբեր և արհմիություններ։ Հեղափոխական բանվորների ճնշման տակ Երկրորդ ինտերնացիոնալի հետ իրենց կապերը խզելու մասին հայտարարեցին Գերմանիայի անկախ սոցիալ-դեմոկրատական, ֆրանսիական սոցիալիստական, Ամերիկայի սոցիալիստական, անգլիական անկախ բանվորական, Շվեյցարիայի սոցիալ-դեմոկրատական և ուրիշ կուսակցություններ, ինչպես նաև ռուսական մենշևիկները։ Իր շարքերը ընդունելով դեպի ձախ ընթացող սոցիալ-դեմոկրատական մասսաներին, Կոմինտերնը, սակայն, չէր կարող թույլ տալ, որպեսզի իր կազմակերպությունների մեջ սողոսկեն այնպիսի տարրեր, որոնք կապերը չէին խզել ռեֆորմիզմի գաղափարախոսության ու պրակտիկայի հետ։

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման, միջազգային կոմունիստական շարժման զարգացման գործում հսկայական դեր խաղացին Կոմինտերնի գործադիր կոմիտեն և նրա օրգան «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագիրը։ 1919 թ. մայիսին լույս տեսավ «Կոմունիստական ինտերնացիոնալի» առաջին համարը։ Այն հրատարակվում էր ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն, իսկ հետագայում՝ իսպաներեն և չինարեն լեզուներով։ Չնայած մեծ դժվարություններին, Կոմինտերնի գործադիր կոմիտեն մեկ տարվա ընթացքում կարողացավ հրատարակել ամսագրի 12 համար, որոնցից 6-ը վերահրատարակվեցին Վիեննայում, 5-ը՝ Բեռլինում։

Բուրժուական գրականության մեջ այն միտքն է անցկացվում, թե իբր Կոմինտերնի գործկոմի և նրա տպագիր օրգանի գործունեության մեջ այդ ժամանակ հիմնական տեղ է գրավել միայն պրոպագանդիստական նյութերի հրատարակումը։ Դրա հետ միասին նույնիսկ պնդվում է, որ իբր թե «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագիրը Արևմուտքում նշանակալից տարածում չի ստացել[4]։ Այդ կեղծարարության նպատակն այն է, որպեսզի Կոմինտերնը ներկայացվի իբրև ոչ աղդեցիկ, կապիտալիստական երկրների բանվորական շրջաններին անհայտ մի կազմակերպություն։

Ընդհակառակը, փաստերը ցույց են տալիս, որ, չնայած հսկայական գրվարություններին, «Կոմունիստական ինտերնացիոնալի» կարևորագույն հոդվածներն ու փաստաթղթերը հասնում էին արտասահմանյան բանվորներին, տարածվում առանձին գրքույկների ու թռուցիկների ձևով։

«Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրին ակտիվորեն աշխատակցում էին Ֆ. Պլատենը, Յու. Մարխլևսկին, Ի. Միլկիչը, Յու. Սիրոլան, Ժ. Սադուլը, Ջ. Ռիդը, Ս. Ռուտգերսը, Օ. Գրիմլունդը, Յա. Բերզինը, Վ. Վորովսկին, Կ. Յետկինը, Մ. Ցխակայան և միջազգային կոմունիստական շարժման ուրիշ գործիչներ։ Ամսագրին ամենաակտիվ աշակցություն էր ցույց տալիս Վ. Ի. Լենինը։ Միջազգային քաղաքականության, հեղափոխական ու կոմունիստական շարժման պրոբլեմների մասին նրա հոդվածներն ու ելույթները արտացոլվեցին Կոմինտերնի գործկոմի հիմնական փաստաթղթերում։ Մի շարք հոդված-

---

[4] J. Hulse, The Forming of the Communist International, Stanford, 1964, էջ 29։

ներում, որոնք տպագրվեցին «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում, Վ. Ի. Լենինը բացատրում էր միջազգային կոմունիստական շարժման տեսության, ստրատեգիայի ու տակտիկայի արմատական հարցերը։ Ամսագրի միայն առաջին 12 համարներում լույս տեսան Վ. Ի. Լենինի 17 հոդվածներն ու ելույթները, որոնցից էին «Երրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ» (1919, № 1), «Բեռնի Ինտերնացիոնալի հերոսները» (1919, № 2), «Երրորդ Ինտերնացիոնալի խնդիրների մասին» (1919, № 4), «Ինչպե՞ս է բուրժուազիան օգտագործում ռենեգատներին» (1919, № 5) և այլն։ Վ. Ի. Լենինի այս և շատ ուրիշ հոդվածներ հանդիսացան միջազգային կոմունիստական շարժման ստրատեգիական գծի և պայքարի տակտիկական միջոցների մշակման համար գործողության ուղեցույց։

Հեղափոխական իրադարձությունների զարգացումը Արևմտյան Եվրոպայում հաստատեց Կոմինտերնի տեսական դրույթի ճշմարտացիությունն այն մասին, որ կապիտալիստական սիստեմը հասունացել է սոցիալիստական հեղափոխության համար։ 1919 թ. Հունգարիայում, Բավարիայում և Սլովակիայում սովետական հանրապետությունների հոչակումը ցույց տվեց, որ պրոլետարիատի դիկտատուրան ոչ թե զուտ ռուսական երևույթ է, ինչպես պնդում էին ռեֆորմիստները, այլ կապիտալիզմից սոցիալիզմին անցման պարտադիր պայման։ Հունգարիայում սոցիալիստական հեղափոխության գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ այստեղ պրոլետարիատը իշխանությունը նվաճեց խաղաղ ճանապարհով։ Դրանով իսկ մերժվեց օպորտունիստների այն պնդումը, թե պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը միշտ էլ կապված է արյունահեղության և տեռորի հետ։ Հունգարիայում, Բավարիայում և Սլովակիայում սովետական հանրապետություններ ստեղծվեցին այն ժամանակ, երբ արդեն համաշխարհային պատերազմն ավարտվել էր, և Անտանտի իմպերիալիստներն իրենց զորքերը նետեցին հեղափոխության օջախների դեմ։

Հունգարիայում և Բավարիայում սովետական իշխանության արյունալի ճնշումից հետո արևմտաեվրոպական պրոլետարիատի հեղափոխական ակտիվությունը որոշ չափով ընկավ, բայց պայքարի հանդեպ նրա ձգտումը չթուլացավ։ Այդ են վկայում գործադուլային խոշոր շարժումները Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում և Ճապոնիայում։ Հեղափոխական շարժումների զարգացումը, ինչպես և նախորդ շրջանում, ավելի նպաստեց բանվորների գիտակցության բարձրացմանը, նրանց համախմբմանը մասսայական կազմակերպություններում։ Ուժեղացավ նաև սոցիալ-դեմոկրատական մասսաների սահմանազատման պրոցեսը, որն արտահայտվեց համաշխարհային կոմունիստական շարժման բուռն աճման մեջ։ Սոցիալ-դեմոկրատական մասսաների սահմանազատման պրոցեսը մեծ չափերով արտահայտվեց ֆրանսիական սոցիալիստական կուսակցության մեջ։ Զախ սոցիալիստները հասան նրան, որ 1919 թ. մայիսին ստեղծեցին Կոմինտերնի հետ միավորվելու նախապատրաստական կոմիտե։ Այն ղեկավարում էին Կարտյեն, Պերիկը, Սոմոնոն։ Կոմիտեն հրատարակում էր «Բյուլետեն կոմունիստ» թերթը, որի էջերում տպագրվում էին նաև Վ. Ի. Լենինի հոդվածները և Կոմինտերնի գործկոմի որոշումները։ Բայց կոմիտեն միասնական չէր։ Շուտով Սոմոնոն դուրս եկավ նրանից և իր շուրջը համախմբեց սոցիալ-շովինիզմի հետ կապերը խզելու հակառակորդներին։

Ֆրանսիական ձախ սոցիալիստների նախապատրաստական կոմիտեից բացի, կային նաև այլ ձախ խմբեր, որոնք ևս համակրում էին Կոմինտերնին. բայց նրանցում տակավին մեծ ազդեցություն ունեին անարխիստական և անարխո-սինդիկալիստական տարրերը։

1919 թ. հոկտեմբերի 28-ին «Ընկեր Լորիոյին և III ինտերնացիոնալին հարած ֆրանսիական բոլոր բարեկամներին» ուղղված նամակում Վ. Ի. Լենինը գրում էր. «Ձեզ հարկ կլինի, իհարկե, դեռ երկար պայքարել ֆրանսիական օպորտունիզմի, հատկապես Լոնգեի ոգով նրբացած օպորտունիզմի դեմ։ «Փորձված» պառլամենտականների և պոլիտիկանների կողմից դեռ շատ ու շատ անդամ փորձեր կարվեն գլուխ պրծացնել, խոսքով ընդունելով հեղափոխական տակտիկան և պրոլետարիատի դիկտատուրան, իսկ գործնականում նրանք կըշարունակեն նոր հնարքներով ու խորամանկությամբ խաբել պրոլետարիատին, ինչպես նրան խաբեցին Լոնգեն, Մերհեյմը և Ընկ. հուլիսի 21-ին[5], շարունակել իրենց հին օպորտունիստական քաղաքականությունը՝ վնասել և խանգարել հեղափոխությանը և ոչ թե օգնել նրան»[6]։

Վ. Ի. Լենինը ուշադրությամբ հետևում էր ֆրանսիական սոցիալիստական կուսակցության հերթական համագումարի հրավիրման նախապատրաստման ընթացքին։ 1920 թ. սկզբին նա ստացավ կուսակցության ղեկավարներից մեկի՝ ցենտրիստ Ժ. Լոնգեի նամակը։ Այդ նամակի հետ միասին Վ. Ի. Լենինը ստացավ նաև նրա «Ինչպես են խաբում ռուսներին» հոդվածը և «Ինտերնացիոնալի վերականգնման կոմիտեի» թերթիկը, որի մեջ զետեղված էին երկու բանաձևերի նախագծեր, որոնք պատրաստված էին ֆրանսիական սոցիալիստական կուսակցության՝ Ստրասբուրգում կայանալիք համագումարի առթիվ։ Ծանոթանալով այդ բանաձևերին, Վ. Ի. Լենինը կատարեց մի շարք արժեքավոր դիտողություններ՝ հանդես գալով «Հրապարակախոսի դիտողություններ» հոդվածով, որը լույս տեսավ «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի 1920 թ. № 9-ում։ Նրանում Վ. Ի. Լենինը բացահայտեց ցենտրիզմի ամբողջ վտանգավորությունը բանվորական շարժման համար։ «Լոնգիստները (ցենտրիստները—Հ. Դ.) չեն հասկացել և չեն ուզում հասկանալ (մասամբ անընդունակ են հասկանալու),—գրում էր նա,—որ հեղափոխական ֆրազով բողարկված ռեֆորմիզմը II ինտերնացիոնալի գլխավոր շարիքն է, նրա խայտառակ կքաքի գլխավոր պատճառը...»[7]։ Լոնգիստների լենինյան քննադատությունը հսկայական նշանակություն ունեցավ ֆրանսիական և միջազգային կոմունիստական շարժման համար։ Այն օգնեց հեղափոխական բանվորներին՝ ավելի խորը հասկանալու ցենտրիզմի վտանգավորությունը և անմիջական ազդեցություն ունեցավ ֆրանսիական սոցիալիստական կուսակցության XVII համագումարի որոշումների վրա (Ստրասբուրգ, 1920 թ. փետրվար)։ Համագումարի աշխատանքների վրա բարերար ազդեցություն թողեց նաև Կոմինտերնի գործկոմի 1920 թ. հունվարի 17-ի հեռագիրը, որով ֆրանսիական կո-

5 Վ. Ի. Լենինը նկատի ունի ֆրանսիական սոցիալ-համաձայնողականների դավաճանական վարքագիծը միջազգային քաղաքական գործողության կապակցությամբ, որը նախատեսված էր 1919 թ. հուլիսի 21-ին ռուսական և հունգարական հեղափոխությունները պաշտպանելու լոզունգներով և նրանց ներքին գործերին՝ իմպերիալիստների չմիջամտելու պահանջներով։ Սակայն օպորտունիստների մեղքով գործողությունը ձախողվեց (Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 686—687, ծանոթագրությունը)։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 88—89։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 454։

մունիստներին կոչ էր արվում ստեղծել ինքնուրույն կուսակցություն և ակտիվորեն հանդես դալ օպորտունիզմի և ցենտրիզմի դեմ մղվող պայքարում։ Համադումարում համառ պայքար ծավալվեց II Ինտերնացիոնալից դուրս գալու և Կոմինտերնի հետ միավորվելու հարցի շուրջը։ Կոմինտերնի ամենից հետևողական կողմնակիցներից էին Ռ. Լեֆերը և Պ. Վայան-Կուտյուրեն, որոնք արտահայտում էին կուսակցության շարքային անդամների շահերը։ Կոմինտերնին միանալու հակառակորդները խմբավորվեցին կուսակցության Նոր դեպարտամենտի ֆեդերացիայի ներկայացրած բանաձևի շուրջը, որն առաջարկեց բավարարվել միայն II ինտերնացիոնալից դուրս գալով[8]։ Համագումարի պատգամավորների ճնշող մեծամասնությունն արտահայտվեց II ինտերնացիոնալից դուրս գալու օգտին։ Դա ֆրանսիական ինտերնացիոնալիստների առաջին խոշոր հաղթանակն էր։ Եվ թեև համագումարը որոշում չընդունեց Կոմինտերնին միանալու մասին (կողմ՝ 621, դեմ՝ 3031), բայց հավանություն տվեց նրա դլխավոր սկզբունքներին և որոշեց «անհապաղ բանակցությունների մեջ մտնել Երրորդ ինտերնացիոնալի պատասխանատու օրգանների հետ»[9]։ Որոշվեց նաև պատվիրակություն ուղարկել Ռուսաստան, որը ծանոթանալով երկրի ներքին կյանքին, ճիշտ պատկերացում կկազմեր այնտեղ կատարվող իրադարձությունների մասին։ Պատվիրակության մեջ մտան «Յումանիտեի» դիրեկտոր Մ. Կաշենը և կուսակցության գլխավոր քարտուղար Ֆրոսսարը[10]։ Պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Վ. Ի. Լենինի հետ, մասնակցեց Մոսկվեյի նիստին։ Մ. Կաշենը հիշում է, որ երբ ինքը հանդիպեց Վ. Ի. Լենինի հետ, վերջինս իրեն դիմավորեց հետևյալ խոսքերով. «Ես սպասում էի ձեզ, քանի որ հավատացած եմ, որ Փարիզի կոմունայի Փարիզը և Ֆրանսիան մեր հաղթական հեղափոխությունն ընդունում են ջերմ զգացումներով»[11]։

1920 թ. մարտի 6-ին արտասանած ճառում՝ նվիրված Կոմինտերնի առաջին տարեդարձին, Վ. Ի. Լենինը նշեց, որ ֆրանսիական բանվորները սոցիալիստական կուսակցության առաջնորդներին ստիպեցին ընդունելու պրոլետարիատի դիկտատուրայի և սովետների անհրաժեշտությունը։ «...II Ինտերնացիոնալը սպանված է, և Գերմանիայի, Անգլիայի ու Ֆրանսիայի բանվորական մասսաները կոմունիստների կողմն են անցնում»[12]։ Եվ իրոք, Ֆրանսիայում բանվորական շարժման զարգացումը նպաստեց երկրում լենինյան գաղափարների տարածմանը և կոմունիստական շարժման ծավալմանը։ 1920 թ., հատկապես Կոմինտերնի II կոնգրեսից հետո, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորման համար։

Գնալով կոմունիստական շարժումը միջազգային բնույթ էր ստանում։ Զախ տարրերը նկատելիորեն աշխուժացան նաև իտալական սոցիալիստական կուսակցության մեջ։ Իտալիայում ծավալված հեղափոխական դեպքերի ազդեցության տակ 1919 թ. գարնանը Ա. Գրամշին, Պ. Տոլյատտին և Ու. Տերաչինին սոցիալիստական կուսակցության Թուրինյան սեկցիայի հեղափոխական ներկայացուցիչներից ստեղծեցին մի խումբ, որը 1919 թ. մայիսի 1-ից սկսեց

8 С. С. Бантке, Из истории борьбы за образование компартии во Франции, М., 1961, էջ 328։

9 «Коммунистический Интернационал», 1929, № 9—10, էջ 169։

10 Նույն տեղում։

11 «Новая и новейшая история», 1957, № 4, էջ 28։

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 539—540։

հրատարակել «Օրդինե նուովո» ամսագիրը։ Նրա խմբագիրը դարձավ Ա. Գրամշին։ Ամսագիրը հսկայական դեր խաղաց Թուրինում և ընդհանրապես ամբողջ Իտալիայում բանվորական շարժման ծավալման ու իտալական կոմունիստական կուսակցության ստեղծման գործում։ Նրանում լայնորեն լուսաբանվում էր ռուսական հեղափոխության փորձը, ցույց էր տրվում, որ աշխատավոր ժողովրդի ազատագրության միակ ուղին պրոլետարիատի կողմից իշխանության նվաճումն է։

Իտալական սոցիալիստական կուսակցության մեջ կային նաև ուրիշ խմբեր։ Բացի ձախերից, ակտիվ դեր էին խաղում նաև ռեֆորմիստները (Ֆ. Տուրատի), որոնք «արգելքներ էին հարուցում ամեն մեկի, ով ցանկանում էր որևէ բան անել, բայց իրենք ևս դրական ոչինչ չէին անում»[13], և մաքսիմալիստ ցենտրիստները (Պ. Սերրատի), որոնք որոշ չափով համերաշխ էին հեղափոխական թևի հետ, «քննադատում էին» ռեֆորմիստներին, բայց և նրանց համարում էին արհմիությունների և մասսայական զանազան կազմակերպությունների անփոխարինելի առաջնորդներ։ Այդպիսի կուսակցությունը երբեք չէր կարող հեղինակություն ունենալ մասսաների մեջ և, ինչպես նշել է Ա. Գրամշին, «Իտալիայում ոչ թե կուսակցությունն էր իր ետևից տանում բանվոր դասակարգին..., այլ մասսաներն էին կուսակցությանն առաջ մղում և դաստիարակում»[14]։

1919 թ. աշնանը հեղափոխական շարժումներն Իտալիայում մեծ չափերի հասան։ Դա իր արտահայտությունը գտավ հոկտեմբերի 5—8-ը Բոլոնիայում տեղի ունեցած սոցիալիստական կուսակցության XVI համագումարի որոշումներում։ Համագումարը «վիթխարի մեծամասնությամբ ընդունեց III Ինտերնացիոնալին միանալը և պրոլետարիատի դիկտատուրայի ծրագիրը»[15], թեև դեռևս պահպանեց կուսակցության հին անվանումը։ Վ. Ի. Լենինը ուշադրությամբ հետևելով Իտալիայում ծավալվող կոմունիստական շարժմանը, մտահոգություն էր արտահայտում այն բանի առթիվ, որ ռեֆորմիստների և ձախերի մնալը միասնական կուսակցության մեջ, կարող է վատ հետևանքներ ունենալ կոմունիստական գաղափարների տարածման համար։ Ավելի վտանգավոր էին ցենտրիստները, որոնք մերժում էին պրոլետարիատի դիկտատուրայի պահանջը։

1919 թ. օգոստոսի 19-ին Վ. Ի. Լենինը նամակ հղեց Դ. Սերրատիին և Կ. Լացարիին, որում ողջունեց II Ինտերնացիոնալի հետ կապերը խզելու և Կոմինտերնին միանալու մասին իտալական սոցիալիստական կուսակցության որոշումը։ Իսկ հոկտեմբերի 28-ին նա նոր նամակ գրեց «Ընկեր Սերրատիին և իտալական կոմունիստներին ընդհանրապես»։ Նրանում Վ. Ի. Լենինը խոսում էր «կուսակցության Բոլոնիայի համագումարի մասին և կոմունիզմի փայլուն հաղթանակի մասին»։ Իտալական կոմունիստներին ցանկանալով լավագույն հաջողություններ, Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Իտալական կուսակցության օրինակը հսկայական նշանակություն կունենա ամբողջ աշխարհի համար»[16]։ Իտալական կոմունիստներին Վ. Ի. Լենինը խորհուրդ էր տալիս «նվաճել ամբողջ արդյունաբերական և ամբողջ գյուղական պրոլետարիատին, պլյուս մանր

---

13 «30 лет жизни и борьбы итальянской компартии», М., 1957, էջ 57։

14 Նույն տեղում, էջ 93։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 46։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 94։

գյուղացիությունը, իսկ այն ժամանակ, միջազգային ճիշտ մոմենտ ընտրելու դեպքում, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակն Իտալիայում հաստատուն կլինի։ Այդ են երաշխավորում նաև կոմունիստների հաջողությունները Ֆրանսիայում, Անգլիայում և ամբողջ աշխարհում»[17]։ Լենինյան խորհուրդները կարևոր նշանակություն ունեցան Իտալիայում հեղափոխական և կոմունիստական շարժման զարգացման համար, որտեղ պայքարը կոմունիստական կուսակցության ստեղծման համար նոր բովանդակություն ստացավ Կոմինտերնի II կոնգրեսից հետո։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հսկայական ազդեցություն թողեց նաև ԱՄՆ-ի հեղափոխական ու կոմունիստական շարժման զարգացման վրա։ Հոկտեմբերյան հեղափոխության ականատես Ա. Վիլյամսը իր «Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության մասին» գրքում գրում էր. «Տապալելով իրենց նախկին կառավարողներին ու նրանց կամակատարներին, Եվրոպայի ու Ասիայի հսկայական տարածություններում՝ Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոս բնակվող ժողովուրդները վերջապես բացահայտեցին երկար ժամանակ նիրհած իրենց բոլոր ուժերն ու ընդունակությունները»[18]։ Ոգևորված ռուս ժողովրդի հաղթանակներով, իր ազատության համար վճռական պայքարի ելավ նաև ամերիկյան պրոլետարիատը։ Հոկտեմբերը «արթնացրեց ամերիկյան բանվորին և առանձնապես պրոլետարիատի առաջավոր տարրերին։ Նա մի ամբողջ հեղափոխություն առաջ բերեց նրա ուղեղում, ցույց տվեց պայքարի նոր ուղիներ՝ հանուն իր ազատության, հանուն կոմունիզմի...»[19]։

ԱՄՆ-ում առաջինը կոմունիստական գաղափարների պրոպագանդմամբ հանդես եկավ «Աշխարհի ինդուստրիալ բանվորների միությունը», չնայած այն բանին, որ կառավարությունը հալածանքների խոշոր կամպանիա էր ծավալել նրա դեմ։ Սակայն բանվորական շարժումների ղեկավարությունը բավարար չէր և կոմունիստական կուսակցության ստեղծումը դարձավ հրամայական պահանջ։ 1919 թ. հունիսի 21-ին Նյու Յորքում տեղի ունեցավ ձախ սոցիալիստների համաամերիկյան կոնֆերանս, որը կարևոր նախապատրաստական էտապ էր կոմկուսակցության ստեղծման գործում։ Ամերիկյան սոցիալիստական կուսակցությունը պառակտվեց և նրա անդամների մեծ մասը (65 %-ը) սկսեց հարել կոմունիստական գաղափարներին։ Նույն թվականի սեպտեմբերի 2-ին Չիկագոյում բացվեց կոմկուսակցության հիմնադիր համագումարը։ Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ սեպտեմբերի 1-ին բացված սոցիալիստական կուսակցության համագումարից ձախերը ոստիկանության օգնությամբ հեռացվել էին։ Սոցիալիստական կուսակցության շարքերում գտնվող այն ձախերը, որոնց ղեկավարում էր Ջ. Ռիդը, հրավիրեցին իրենց կոնֆերանսը և ստեղծեցին Ամերիկայի կոմունիստական բանվորական կուսակցությունը։ Իսկ Ջ. Ռուտենբերգի գլխավորած ձախերը ինքնուրույն հրավիրեցին համագումար և ստեղծեցին Ամերիկայի կոմունիստական կուսակցությունը։ Այսպիսով, ԱՄՆ-ում միաժամանակ ստեղծվեցին երկու կոմկուսակցություններ։ Այդ կուսակցությունները միավորելու փորձերը սկզբնա-

---

17 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 95։

18 Ա. Ռ. Վիլյամս, Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության մասին, Երևան, 1963, էջ 27։

19 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 461, оп. 1, д. 31895, л. 1.

կան շրջանում հաջողություն չունեցան։ Միավորումը տեղի ունեցավ միայն 1921 թ.՝ Ջ. Ռիդի և Ու. Ֆոստերի գլխավորությամբ։

Երկու կուսակցությունների ծրագրերում էլ առաջ էր քաշվում իշխանության գրավման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման խնդիրը։ Բայց նրանք ճիշտ չգնահատեցին իրադրությունը երկրում և տառապում էին «ձախության» սխալներով։ Երկու կուսակցություններն էլ ընդունեցին որոշում՝ Կոմինտերնին միանալու մասին։ Չնայած կոմունիստական շարժման մասնատվածությանը, ԱՄՆ-ում կոմունիստական կուսակցությունների առաջացումը ամերիկյան բանվորական շարժման խոշոր նվաճումն էր։

Բուլղարական տեսնյակ սոցիալիստների հերթական՝ XXII համագումարում, որը տեղի ունեցավ 1919 թ. մայիսին, կուսակցությունը վերանվանվեց կոմունիստական։ Համագումարի դեկլարացիայում նշվում էր, որ կուսակցության նպատակն է անմիջական պայքար ծավալել պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Համագումարը հայտարարեց կուսակցության՝ Կոմինտերնին միանալու մասին։ Սակայն դեկլարացիայում պրոլետարիատի դաշնակիցների մասին խոսք չկար։ Հետագայում Գ. Դիմիտրովը այդ առթիվ գրեց. «...Ոչ միայն ես, այլև ամբողջ կուսակցությունը իր ժամանակին չէր հասկացել, որ մեր բուլղարական հեղափոխական տեսնյակությունը դեռևս բոլշևիզմ չէ։ Տեսնյակության և բոլշևիզմի միջև եղած տարբերություններից մենք համապատասխան եզրակացություններ չարինք, դաս չվերցրինք, դրանով իսկ արգելելով կուսակցության բոլշևիկացման պրոցեսը»[20]։

Անգլիական պրոլետարիատը չերմորեն ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի լուրը։ Երկրի սոցիալիստական շարժման մեջ ձախ տրամադրություններ ունեին սոցիալիստական, սոցիալիստական բանվորական կուսակցությունները, հարավ-ուելսյան սոցիալիստական ընկերությունը, Շոտլանդիայի կոմունիստական բանվորական կուսակցությունը և այլ խմբեր։ Կոմինտերնի I կոնգրեսից հետո այդ կազմակերպությունների մերձեցման պրոցեսը՝ հանուն կոմունիստական կուսակցության ստեղծման, ուժեղացավ։ Բրիտանական սոցիալիստական կուսակցությունը հայտարարեց II Ինտերնացիոնալից դուրս գալու և Կոմինտերնին միանալու մասին։ Կոմունիստական կուսակցության ստեղծման ճանապարհին կարևոր քայլ էր 1919 թ. հունիսին տեղի ունեցած ձախ կազմակերպությունների կոնֆերանսը։ Սակայն անգլիական կոմունիստական շարժման մեջ մեծ վտանգ էին ներկայացնում «ձախության» և աղանդավորության տրամադրությունները։ Անգլիական կոմունիստների մի մասը հանդես եկավ պառլամենտին մասնակցելու դեմ։ Սոցիալիստական բանվորական կուսակցության ղեկավարությունը նույնիսկ իր շարքերից հեռացրեց նրանց, ովքեր հանդես եկան լեյբորիստական կուսակցության մեջ մտնելու օգտին։ Բանվորական սոցիալիստական ֆեդերացիան Ս. Պանկհերստի գլխավորությամբ, որը դեմ էր լեյբորիստական կուսակցության մեջ մտնելուն, ինչպես նաև դեմ էր պայքարի պառլամենտական մեթոդին, հրաժարվեց միասնական կուսակցություն ստեղծելու առաջարկից և 1919 թ. հունիսի 19-ին իրեն հայտարարեց կոմունիստական կուսակցություն։ Այդպիսի ձախ, աղանդավորական քայլը խանգարեց Անգլիայի բոլոր կոմունիստական խմբերի միավորմանը մեկ միասնական կուսակցության մեջ։ Այդ առթիվ Վ. Ի.

---

[20] Г. Димитров, Избранные произведения, т. 1, М., 1957, էջ 272։

Լենինը նամակով դիմեց Ս. Պանկհերստին[21], որը տպագրվեց «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրում։ Այն խոշոր դեր խաղաց Անգլիայում և մյուս երկրներում «ձախ» կոմունիստների սխալների մերկացման գործում, օգնեց պարզաբանելու միասնական կոմունիստական կուսակցության ստեղծման կարեորությունը։

1920 թ. ապրիլին Անգլիայում կոմունիստական կուսակցության ստեղծման կողմնակիցները ստեղծեցին միացյալ ժամանակավոր կոմիտե, որը և ձեռնամուխ եղավ անգլիական կոմունիստների միավորման գործին։ Իսկ 1920 թ. հուլիսի 31-ից օգոստոսի 1-ը տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայի կոմունիստական կուսակցության հիմնադիր համագումարը։ Նորաստեղծ կոմկուսակցության մեջ մտան բոլոր ձախ կազմակերպությունները։ Համագումարն արտահայտվեց պառլամենտին մասնակցելու և լեյբորիստական կուսակցության մեջ կոմկուսակցության մտնելու օգտին։ Համագումարի մասնակիցները որոշում ընդունեցին նաև կուսակցության՝ Կոմինտերնին միանալու մասին։

Կոմինտերնի I կոնգրեսից հետո ստեղծվեցին նաև Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմկուսակցությունները։ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում կոմկուսակցությունների ստեղծման հարցը բարձրացավ 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբին։ Դեռևս 1919 թ. դեկտեմբերի 21-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ողջունեց Ադրբեջանի կոմկուսակցության ծնունդը և միաժամանակ առաջարկեց կոմկուսակցություններ ստեղծել նաև Հայաստանում ու Վրաստանում։

1920 թ. մայիսին ձևավորվեց Վրաստանի, իսկ քիչ ավելի ուշ, 1920 թ. հունիսին՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը։ 1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմակերպական բյուրոն հատուկ որոշմամբ հաստատեց Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում կոմկուսակցությունների ստեղծումը՝ նրանց տալով մարզային կազմակերպությունների իրավունք։

Այսպիսով, ինչպես տեսանք, Կոմունիստական ինտերնացիոնալի I կոնգրեսից հետո միջազգային կոմունիստական շարժումը մեծ ծավալ ստացավ։ Նորաստեղծ կոմկուսակցություններն ամենուրեք դարձան բանվոր դասակարգի և աշխատավորական մյուս զանգվածների հեղափոխական շարժումներին ուղղություն տվող ուժը։ Սակայն, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «արտասովոր արագ աճող միջազգային կոմունիստական շարժման մեջ նշվել են երկու սխալ կամ թուլություն»[22]։ II ինտերնացիոնալի հին առաջնորդների և հին կուսակցությունների մի մասը տեղի տալով ժողովրդական մասսաներին, հայտարարում էին II ինտերնացիոնալից դուրս գալու և Կոմինտերնին միանալու մասին, թեև իրականում մնում էին օպորտունիստներ և ռեֆորմիստներ։ Վերջիններս միաժամանակ հայտարարում էին, որ պատերազմից հետո ստեղծվել է «հավասարակշռություն» և առանց որևէ ներգործման էլ բուրժուազիան պայմաններ է ստեղծում մասսաների համար տնտեսական բարվոք կյանք ստեղծելու ուղղությամբ[23]։ Մյուս սխալը, որ ավելի շուտ աճման հիվանդություն էր, զգա-

21 Ս. Պանկհերստը հանդես գալով բուրժուական պառլամենտին բանվորների մասնակցության դեմ, 1919 թ. հուլիսի 16-ին նամակով դիմեց Վ. Ի. Լենինին՝ խնդրելով նրան հանդես գալ այդ հարցի շուրջը։ Ս. Պանկհերստի նամակը և Վ. Ի. Լենինի պատասխանը տպագրվեցին «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի 1919 թ. № 5-ում։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 215։

23 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 461, оп. 1, д. 30488, л. 2.

լի չափով բացատրվում էր երիտասարդ կոմկուսակցությունների անփորձությամբ և մարքսիստական-լենինյան տեսության թույլ իմացությամբ։ Նրանք ավելի շատ ձգտում էին դեպի «ձախությունը», դեպի աղանդավորական տակտիկան։ «Ձախ» կոմունիստները սխալ էին հասկանում կոմկուսակցությունների դերն ու տակտիկան մասսաների նկատմամբ. հրաժարվում էին աշխատել ռեակցիոն արհմիություններում և մասնակցել բուրժուական պառլամենտներին. չէին հասկանում կոմպրոմիսների և համաձայնությունների նշանակությունը։

Բանվորական շարժման համար ամենամեծ վտանգը Վ. Ի. Լենինը տեսնում էր օպորտունիզմի, ռեֆորմիզմի և ռևիզիոնիզմի մեջ և նրանց դեմ պայքարը ամեն մի կուսակցության առաջնահերթ խնդիրն էր համարում։ Նա անողոք պայքար էր մղում նաև ցենտրիստների դեմ, որոնք չէին ուզում կապերը խզել բացահայտ օպորտունիստներից, խոսքով ընդունում էին անգամ պրոլետարիատի դիկտատուրան, բայց իրականում չէին պայքարում նրա համար։ Վ. Ի. Լենինը միաժամանակ վճռականորեն հանդես եկավ կոմկուսակցությունների մեջ եղած «ձախ» օպորտունիզմի, դոգմատիզմի և աղանդավորականության դեմ։ 1920 թ. ապրիլ-մայիս ամիսներին Վ. Ի. Լենինը գրեց «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» հանճարեղ աշխատությունը, որի մեջ բազմակողմանի քննադատության ենթարկեց «ձախերի» սիալները։ Նա ցույց տվեց, որ «ձախ դոկտրինյորությունը» քողարկվելով հեղափոխական կեղծ ֆրազներով, նահանջ է մարքսիզմի տեսությունից և պրակտիկայից դեպի անարխո-սինդիկալիզմը և կոմկուսակցություններին մղում է մասսաներից կտրվելու նրանց համար կործանարար ուղին։ Ընդհանրացնելով ռուսական բոլշևիկների և միջազգային բանվորական ու կոմունիստական շարժման հեղափոխական հարուստ փորձը, Վ. Ի. Լենինը մշակեց կոմկուսակցությունների ստրատեգիայի ու տակտիկայի կարևորագույն հարցերը պատմական նոր իրադրության մեջ։

Համբերատար կերպով ուղղելով երիտասարդ կոմունիստների թույլ տված սխալները, Վ. Ի. Լենինը նրանց առաջարկում էր ուսումնասիրել բոլշևիզմի փորձը, որը, որպես տակտիկայի օրինակ, կարող է պետք գալ բոլոր կոմկուսակցություններին։ Հաղթահարելով տարաձայնությունները, արմատախիլ անելով սխալները, կոմկուսակցությունները կարող են և պետք է միասնական լինեն, չվախենան հալածանքներից, քանի որ դրանք ոչ թե թուլացնում, այլ ավելի են ուժեղացնում նրանց։ Բուրժուազիան որքան էլ կատաղի, միևնույն է «ապագան համենայն դեպս պատկանում է իրենց (կոմունիստներին—Հ. Դ.) և դրա համար էլ մենք կարող ենք (և պարտավոր ենք) մեծ հեղափոխական պայքարում մեծագույն կրքոտությունը միացնել բուրժուազիայի մոլեգին գալարումների ամենասառնարյուն ու զգաստ հաշվառման հետ»[24]։

Վ. Ի. Լենինի «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատության հիմնական դրույթները գրվեցին Կոմինտերնի II կոնգրեսի ընդունած որոշումների հիմքում և վճռական դեր խաղացին Կոմինտերնում ու նրա սեկցիաներում «ձախության» սխալների հաղթահարման գործում։ Նրանում առաջ քաշված մտքերն ու դաղափարները չեն կորցրել իրենց այժմեական նշանակությունը, քանի որ, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXV համագումարում,

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 110։

մեր օրերում ևս «թե՛ աջ և թե՛ ձախ» ռևիզիոնիզմը ամենևին էլ անգործություն չի մատնված, և կոմունիստական շարժման մարքս-լենինյան հիմքերի հասար դրանք խեղաթյուրելու կամ խարխարելու փորձերը դեմ մղվող պայքարը մնում է բոլորի ընդհանուր խնդիրը»[25]։

РАЗВИТИЕ МЕЖДУНАРОДНОГО КОММУНИСТИЧЕСКОГО ДВИЖЕНИЯ ПОСЛЕ I КОНГРЕССА КОМИНТЕРНА (1919—1920)

ГРАЙР ДАРБИНЯН

Резюме

В период между основанием Коммунистического Интернационала и его II конгрессом (с марта 1919 г. по июль 1920 г.) во многих странах продолжали создаваться коммунистические партии и группы, заявлявшие о своем присоединении к Коминтерну. В течение года Коминтерн достиг таких побед, которых «...нельзя было ожидать, и можно смело сказать, что никто не ожидал таких громадных успехов при его основании» (В. И. Ленин). Но процесс образования и развития коммунистических партий был сложным, и молодые компартии с самого начала встретили на своем пути много серьезных трудностей. В преодолении этих трудностей огромную роль сыграла книга В. И. Ленина «Детская болезнь «левизны» в коммунизме», которую он написал в канун II конгресса Коминтерна.

25 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 46։